Ուղեցույց

Կանանց իրավունքները

Հունվար, 2020թ.

Սույն ուղեցույցը ֆինանսավորվել է ԱՄՆ պետքարտուղարության Հասարակության հետ կապերի գրասենյակի դրամաշնորհի շրջանակներում: Այս կայքում/ուղեցույցում արտահայտված է հեղինակի դիրքորոշումը, որի համընկնումը ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշման հետ պարտադիր չէ

1. **Արդյո՞ք ՀՀ-ում կանայք և տղամարդիկ ունեն հավասար իրավունքներ**

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված է, որ կանայք և տղամարդիկ իրավահավասար են: Խտրականությունը, կախված սեռից արգելվում է:

2. **Ի՞նչ է նշանակում կանանց նկատմամբ խտրականությունը**

Կանանց նկատմամբ խտրականությունը նշանակում է սեռի հիմքով ցանկացած տարբերակում, բացառում կամ սահմանափակում, որը նպատակ ունի կանանց համար սահմանափակել կամ վերացնել քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքացիական կամ ցանկացած այլ բնագավառում, տղամարդկանց և կանանց, անկախ նրանց ամուսնական կարգավիճակից, հավասարության հիմքով, մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների ճանաչումը և կանանց կողմից այդ իրավունքների ու ազատությունների իրականացումը կամ դրանցից օգտվելը:

3. **Ո՞ր դեպքում կանանց և տղամարդկանց հարաբերությունների կարգավորման հարցերում տարբերությունների սահմանումը չի համարվում գենդերային խտրականություն**

Գենդերային խտրականություն չեն՝

- կանանց և տղամարդկանց հարաբերությունների կարգավորման հարցերում տարբերությունների սահմանումը՝ պայմանավորված հղիությամբ և ծննդաբերությամբ, երեխայի խնամքով և կրծքով կերակրելով.
- տղամարդկանց պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության անցնելը.
- կանանց և տղամարդկանց աշխատանքի պահպանման առանձնահատկությունները՝ կապված նրանց վերարտադրողական առողջության պահպանման հետ.
- մասնագիտական որակավորմանը ներկայացվող պահանջների սահմանումը՝ հիմնված պարտականությունների՝ միայն որոշակի սեռի անձանց, կատարման հնարավորության վրա.

- այն տարբերությունների սահմանումը, որը պայմանավորված է տարբեր սեռերի կենսաբանական առանձնահատկությամբ:

4. Ի՞նչ իրավունքներ ունեն կանայք երկրի քաղաքական ու հասարակական կյանքում

Երկրի քաղաքական ու հասարակական կյանքում կանանց համար, տղամարդկանց հետ հավասար պայմաններով, ապահովում են հետևյալ իրավունքները.

- քվեարկելու բոլոր ընտրություններում և հանրաքվեներում, ընտրվելու բոլոր պետական ընտրովի մարմիններում,
- մասնակցելու կառավարության քաղաքականության ձևավորմանն ու իրականացմանը և կառավարման բոլոր մակարդակներով զբաղեցնելու պետական պաշտոններ և իրականացնելու բոլոր պետական գործառույթները,
- մասնակցելու երկրի հասարակական ու քաղաքական կյանքին առնչվող հասարակական կազմակերպությունների և միավորումների գործունեությանը:

5. Ինչպիսի՞ երաշխիքներ են գործում հանրային ծառայության մեջ կանանց և տղամարդկանց հավասարությունը պահպանելու համար

Կանայք և տղամարդիկ հանրային ծառայության ընդունվելու և մասնագիտական գործունեություն իրականացնելու համար ունեն հավասար իրավունքներ, պարտականություններ, պատասխանատվություն և հավասար հնարավորություններ:

Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են ապահովել կանանց և տղամարդկանց՝ հանրային ծառայության ընդունվելու հավասար հնարավորություններ՝ իրենց ընդունակություններին և մասնագիտական պատրաստվածությանը համապատասխան:

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակազմերում աշխատողներին պաշտոններում նշանակելիս, աշխատանքային առաջխաղացում կամ մասնագիտական գիտելիքների և աշխատանքային

ունակությունների կատարելագործման նպատակով վերապատրաստման, ուսուցման գործուղում իրականացնելիս բացառվում են գենդերային խտրականության դրսևորումները:

Կանայք և տղամարդիկ հանրային ծառայության թափուր պաշտոնների համալրմանը իրավունք ունեն մասնակցելու օրենքով սահմանված կարգով՝ հավասարապես և հավասար պայմաններում:

Արգելվում է միայն մեկ սեռի անձանց համար հանրային ծառայության ընդունվելու մրցույթներ հայտարարելը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա ուղղակիորեն բխում է այլ անձանց իրավունքների և շահերի պաշտպանությունից:

6. Ո՞րն է համարվում ընտանիքում բռնություն

Ընտանիքում բռնություն է համարվում ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բնույթի բռնի արարքը, ինչպես նաև անտեսումը, որը կատարվել է ընտանիքի անդամների միջև:

7. Որո՞նք են ընտանիքում կնոջ նկատմամբ դրսևորվող բռնության տեսակները

Ընտանիքում կնոջ նկատմամբ դրսևորվող բռնության տեսակներն են՝

- ֆիզիկական բռնություն՝ ծեծը և այլ բռնի գործողությունները, դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելը, ազատությունից ապօրինի զրկելը, դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ պատճառելը.
- սեռական բռնություն՝ բռնաբարությունը, սեքսուալ բնույթի բռնի գործողությունները, սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելը և այլն.
- հոգեբանական բռնություն՝ դիտավորությամբ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, այդ թվում՝ ֆիզիկական, սեռական կամ տնտեսական բռնություն գործադրելու իրական սպառնալիքը, դիտավորությամբ պարբերաբար այնպիսի գործողություններ կատարելը, որոնք անձի մեջ հիմնավոր վախ են հարուցում իր կամ ընտանիքի անդամի անձնական անվտանգությանը սպառնացող վտանգի մասին, արժանապատվության պարբերական նվաստացումը,

սոցիալական ծայրահեղ մեկուսացումը, հղիության արհեստական ընդհատման հարկադրանքը.

- տնտեսական բռնություն՝ անձին հարկադրված նյութական կախվածություն ստեղծելու կամ իշխելու նպատակով նրան գոյության անհրաժեշտ միջոցներից (սնունդ, հագուստ, կացարան, դեղորայք) զրկելը, սեփականության կամ ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքը տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու իրավունքները ոչ իրավաչափ սահմանափակելը, անձի կրթություն ստանալու կամ աշխատանքի ընտրության ազատության իրավունքները սահմանափակելը:

8. Ո՞ր դեպքում է կինը համարվում ընտանիքում բռնության ենթարկված

Կինը համարվում է ընտանիքում բռնության ենթարկված, այն դեպքում, եթե ըստ նախազգուշացման, անհետաձգելի միջամտության, պաշտպանական որոշման կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի, տուժել է ընտանիքում բռնությունից:

9. Որո՞նք են ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցները

Ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցներն են՝

1) նախազգուշացումը, որը կիրառվում է այն դեպքերում, երբ ընտանիքում բռնության դեպքը ոստիկանությունը հայտնաբերել է առաջին անգամ, կատարված արարքը հանցակազմի հատկանիշներ առերևույթ չի պարունակում, և անհետաձգելի միջամտության հիմքերն առկա չեն:

2) անհետաձգելի միջամտության որոշումը, որը կիրառվում է այն դեպքում եթե ընտանիքի մեկ անդամը մյուսի նկատմամբ բռնություն է կիրառել, և առկա է հիմնավոր ենթադրություն բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի մասին, ապա ընտանիքի մյուս անդամի կյանքի և առողջության ապահովման նպատակով ոստիկանության իրավասու ծառայողն անհապաղ կայացնում է անհետաձգելի միջամտության որոշում: Անհետաձգելի միջամտության որոշում կարող է կայացվել նաև այն դեպքում, երբ նախազգուշացում ստանալուց

հետո՝ մեկ տարվա ընթացքում, անձը կատարել է այնպիսի բռնի արարք, որը չի պարունակում հանցակազմի հատկանիշներ:

3) պաշտպանական որոշումը, որը կայացվում է դատարանի կողմից ընտանիքում բռնության ենթարկված կամ ենթադրաբար ենթարկված անձի կամ նրա համաձայնությամբ՝ աջակցության կենտրոնի ներկայացրած դիմումի հիման վրա:

10. Պաշտպանական որոշման վերաբերյալ գործերը ո՞ր դատարանին է ընդդատյա

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքով նախատեսված պաշտպանական որոշման վերաբերյալ հայցադիմումը ներկայացվում է ընտանիքում բռնության ենթարկված կամ ենթադրաբար ենթարկված անձի բնակության վայրի կամ վերջինիս համաձայնությամբ հայցադիմում ներկայացնող աջակցության կենտրոնի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան:

11. Որո՞նք են ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության գործառույթներ իրականացնող մարմինները

Ընտանիքում բռնության կանխարգելումը և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանությունն իրենց գործառույթների շրջանակներում իրականացնում են՝

1) սոցիալական հարցերի ոլորտում լիազոր հանրապետական գործադիր մարմինը (ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը).

2) ոստիկանությունը.

3) կրթության ոլորտի լիազոր հանրապետական գործադիր մարմինը.

4) առողջապահության ոլորտի լիազոր հանրապետական գործադիր մարմինը.

5) խնամակալության և հոգաբարձության մարմինները.

6) ընտանիքում բռնության ենթարկվածներին աջակցություն ցույց տվող հատուկ կառույցները՝

ա. աջակցության կենտրոնները,

բ. ապաստարանները:

12. Ո՞ր դեպքում կինը կարող է դիմել Հանրային պաշտպանի գրասենյակ անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար

Հանրային պաշտպանի գրասենյակը անվճար իրավաբանական օգնություն տրամադրում է այն կանանց, ովքեր «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ընտանիքում ենթարկվել են բռնության:

13. Ի՞նչ փաստաթղթեր պետք է ներկայացնի ընտանիքում բռնության ենթարկված կինը անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի համաձայն ընտանիքում բռնության ենթարկված անձն անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար հանրային պաշտպանի գրասենյակ պետք է ներկայացնի «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի համաձայն տրված՝ նախազգուշացման, անհետաձգելի միջամտության, պաշտպանական որոշումը կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռը՝ ընտանիքում բռնությունից տուժելու մասին, ինչպես նաև անձը հաստատող փաստաթուղթը:

14. Արդյո՞ք ընտանիքում կանայք և տղամարդիկ իրավահավասար են

Ընտանիքում կանայք և տղամարդիկ ունեն հավասար իրավունքներ: Ամուսիններից յուրաքանչյուրն ազատ է աշխատանք, զբաղմունք, մասնագիտություն, բնակության վայր ընտրելու հարցում: Երեխաների դաստիարակության և կրթության, ինչպես նաև ընտանեկան կյանքի այլ հարցերը ամուսինները լուծում են համատեղ՝ ելնելով ամուսինների իրավահավասարության սկզբունքից:

15. Ինչպիսի՞ իրավունքներ ունեն կանայք ամուսնության և ընտանեկան հարաբերություններին վերաբերող հարցերում

Կանայք տղամարդկանց հետ հավասար ունեն՝

- ամուսնության միևնույն իրավունքը,
- ամուսնու ազատ ընտրության և միայն իր ազատ ու լիակատար համաձայնությամբ ամուսնանալու միևնույն իրավունքը,
- ամուսնության ընթացքում և ամուսնալուծվելիս միևնույն իրավունքներն ու պարտականությունները,
- տղամարդկանց և կանանց համար միևնույն իրավունքներն ու պարտականությունները որպես ծնողներ՝ անկախ նրանց ամուսնական կարգավիճակից իրենց երեխաներին վերաբերող հարցերում,
- երեխաների թվի և նրանց ծննդի միջև ընկած ժամանակամիջոցի հարցն ազատորեն ու պատասխանատվությամբ լուծելու միևնույն իրավունքը և այդ իրավունքներն իրականացնելու հնարավորություն ընձեռող տեղեկատվություն, կրթություն և միջոցներ ստանալու իրավունքը,
- երեխաների խնամակալության, հոգաբարձության և որդեգրման կամ համանման գործառույթներ իրականացնելու միևնույն իրավունքներն ու պարտականությունները,
- միևնույն անձնական իրավունքները՝ որպես ամուսին և կին, այդ թվում՝ ազգանվան, մասնագիտության և զբաղմունքի ընտրության իրավունքը,
- ամուսինների հավասար իրավունքները գույքի սեփականության, ձեռքբերման, տիրապետման, կառավարման, դրանից ինչպես անվճար, այնպես էլ վարձով օգտվելու և տնօրինելու կապակցությամբ:

16. Արդյո՞ք կինը ունի սեփականության իրավունք ամուսնության ընթացքում ամուսնու կողմից ձեռք բերված գույքի նկատմամբ

Կինը ունի համատեղ սեփականության իրավունք ամուսնության ընթացքում ամուսնու կողմից ձեռք բերած գույքի նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ նրանց միջև կնքված պայմանագրով: Մինչև ամուսնությունն ամուսիններից յուրաքանչյուրի գույքը, ինչպես նաև ամուսնության ընթացքում

ամուսիններից մեկի նվեր կամ ժառանգություն ստացած գույքը համարվում է նրա սեփականությունը:

17. Ո՞ր դեպքում կինը իրավունք ունի ամուսնուց պահանջել վճարել ապրուստի միջոց

Ամուսինները պարտավոր են նյութապես օժանդակել միմյանց: Կինը իրավունք ունի ալիմենտ վճարելու անհրաժեշտ միջոցներ ունեցող ամուսնուց դատական կարգով պահանջել վճարել ալիմենտ հետևյալ դեպքերում՝

ա) անաշխատունակ անապահով լինելու դեպքում,

բ) հղիության ընթացքում, ինչպես նաև ընդհանուր երեխային խնամելու դեպքում մինչև երեխայի երեք տարին լրանալը.

գ) եթե կինը անապահով է և խնամում է մանկուց հաշմանդամ ընդհանուր երեխային կամ առաջին խմբի հաշմանդամ չափահաս զավակին:

18. Ո՞ր դեպքում ամուսինը չի կարող ամուսնալուծության դիմում ներկայացնել

Ամուսինը, առանց կնոջ համաձայնության, իրավունք չունի ամուսնալուծության դիմում ներկայացնելու կնոջ հղիության ընթացքում:

19. Ովքե՞ր ունեն մայրության նպաստի իրավունք

Մայրության նպաստի իրավունք ունեն՝

1) գործատուների հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող ֆիզիկական անձինք (վարձու աշխատողներ).

2) անհատ ձեռնարկատերերը, նոտարները (ինքնուրույնաբար իրենց աշխատանքով ապահովված անձինք).

3) Հայաստանի Հանրապետության բնակության վայրի հասցեով հաշվառված՝ հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի առաջին օրվա դրությամբ վարձու աշխատող կամ

ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձ չհանդիսացող անձը (չաշխատող անձ):

20. Չաշխատող կինը ի՞նչ փաստաթղթեր պետք է ներկայացնի մայրության նպաստ ստանալու համար

Չաշխատող անձին մայրության նպաստ նշանակվում է մայրության նպաստի իրավունք ունեցող անձի դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային կենտրոն ներկայացվելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

Նպաստը նշանակելու համար դիմողը տարածքային կենտրոն է ներկայացնում՝ դիմում, որում ներառվում են՝

- դիմողի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան և համարը, բնակության (հաշվառման) վայրի հասցեն,
- շահառուի (չաշխատող կնոջ) անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան և համարը, հանրային ծառայությունների համարանիշը (հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը, եթե հրաժարվել է հանրային ծառայությունների համարանիշ ստանալուց), բնակության (հաշվառման) վայրի հասցեն,
- շահառուի բանկային հաշվի համարը կամ այն բանկը, որտեղից շահառուն ցանկանում է ստանալ մայրության նպաստի գումարը.
- դիմողի և շահառուի անձը հաստատող փաստաթղթերը, շահառուի հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքը, եթե շահառուն հրաժարվել է հանրային ծառայությունների համարանիշ ստանալուց.
- Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով բժշկական կազմակերպության տված ժամանակավոր անաշխատունակության թերթիկը.
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ծննդօգնության պետական հավաստագիրը, իսկ եթե դիմումը ներկայացվել է երեխայի ծնվելուց հետո՝ ծննդօգնության պետական հավաստագրի պատճենը (վավերացված այն բժշկական կազմակերպության կնիքով և տնօրենի ստորագրությամբ, որտեղ

ծննդաբերել է հղին) և երեխայի ծննդի պետական գրանցման փաստը հաստատող փաստաթուղթը (ծննդյան վկայական, երեխայի ծննդի պետական գրանցման փաստը հաստատող այլ փաստաթուղթ կամ մահվան վկայական).

- շահառուի ստորագրած հայտարարությունը՝ հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի առաջին օրվա դրությամբ՝ օրենքով սահմանված վարձու աշխատող կամ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձ չհանդիսանալու մասին (հայտարարությունը ներառում է նաև շահառուի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը, հայտարարությունը տալու ամսաթիվը, ամիսը, տարեթիվը): Հայտարարությունը կարող է շարադրվել նաև ազատ ոճով:

21. Արդյո՞ք օտարերկրացու հետ ամուսնությունը, ամուսնալուծությունը կամ ամուսնության ընթացքում ամուսնու կողմից քաղաքացիությունը փոխելը ազդում են կնոջ քաղաքացիության վրա

Օտարերկրացու հետ ամուսնությունը, ամուսնալուծությունը, ամուսնության ընթացքում ամուսնու կողմից քաղաքացիությունը փոխելն ինքնաբերաբար չեն ազդում կնոջ քաղաքացիության վրա: Ամուսնու կողմից որևէ պետության քաղաքացիության կամավոր ձեռքբերումը, քաղաքացիությունից հրաժարումը չեն խոչընդոտում այդ քաղաքացու կնոջը՝ պահպանելու իր քաղաքացիությունը, չեն վերածում նրան քաղաքացիություն չունեցող անձի և չեն կարող նրան ստիպել ընդունելու ամուսնու քաղաքացիությունը: Կանայք տղամարդկանց հետ հավասար իրավունքներ ունեն իրենց երեխաների քաղաքացիության առնչությամբ:

22. Արդյո՞ք գործատուն կարող է սեռի հետ պայմանավորված խտրականություն դրսևորել և կանանց չընդունել աշխատանքի

Աշխատանքի ընդունման հայտարարություններում (մրցույթներում) և աշխատանքային հարաբերությունների իրացման ընթացքում արգելվում է, գործնական հատկանիշներից և մասնագիտական պատրաստվածությունից ու որակավորումից բացի, խտրականության հիմք հանդիսացող որևէ այլ պայման սահմանելը, բացառությամբ եթե դա բխում է աշխատանքին ներհատուկ պահանջներից:

23. Կարո՞ղ է արդյոք գործատուն կնոջ հղիության շարժառիթով հրաժարվել նրան աշխատանքի ընդունելուց կամ անհիմն ազատել աշխատանքից

Արգելվում է հղի կնոջը կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձին աշխատանքի ընդունելուց անհիմն հրաժարվելը կամ ազատելը:

Հղի կնոջը հղիության շարժառիթով կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձին այդ շարժառիթով աշխատանքի ընդունելուց անհիմն հրաժարվելը կամ աշխատանքից անհիմն ազատելը համարվում է հանցագործություն և պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով:

24. Արդյո՞ք գործատուն կարող է նույն աշխատանքի համար կին աշխատողին վարձատրել ավելի քիչ, քան արական սեռի աշխատողին

Արգելվում է միևնույն կամ համարժեք աշխատանքի դիմաց տարբեր վարձատրությունը, աշխատանքի վարձատրության ցանկացած փոփոխությունը (բարձրացում կամ իջեցում) կամ աշխատանքի պայմանների վատթարացումը սեռի հատկանիշով պայմանավորված:

Աշխատանքների որակավորման համակարգի կիրառման դեպքում միևնույն չափանիշները պետք է կիրառվեն ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց նկատմամբ, և այդ համակարգը պետք է մշակված լինի այնպես, որ բացառի սեռային հատկանիշներով ցանկացած խտրականություն:

25. Ինչպիսի՞ արտոնություններ և իրավունքներ են սահմանված ՀՀ Աշխատանքային օրենսդրությամբ հղի կանանց համար

ՀՀ աշխատանքային օրենսգրքով աշխատող հղի կանայք ունեն մի շարք իրավունքներ և արտոնություններ: Դրանք են՝

- Հղի կանայք և մինչև մեկ տարեկան երեխա խնամող աշխատողը կարող են արտաժամյա աշխատանքի ներգրավվել միայն իրենց համաձայնությամբ:

- Հղի կանայք և մինչև երեք տարեկան երեխա խնամող աշխատողը կարող են գիշերային աշխատանքի ներգրավվել միայն իրենց համաձայնությամբ՝ նախնական բժշկական զննություն անցնելուց և գործատուին բժշկական եզրակացություն ներկայացնելուց հետո:
- Հղի կանայք և մինչև երեք տարեկան երեխա խնամող աշխատողը կարող են տանը կամ կազմակերպությունում հերթապահության ներգրավվել միայն իրենց համաձայնությամբ:
- Հղի կանայք, մինչև մեկ տարեկան երեխա խնամող աշխատողները կարող են հանգստյան օրերին աշխատանքի ներգրավվել միայն իրենց համաձայնությամբ:
- Հղի կանայք, մինչև մեկ տարեկան երեխա խնամող աշխատողները կարող են ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին աշխատանքի ներգրավվել միայն իրենց համաձայնությամբ:
- Մինչև անընդմեջ աշխատանքի վեց ամիսը լրանալը աշխատողի խնդրանքով ամենամյա արձակուրդ տրամադրվում է կանանց հղիության ու ծննդաբերության արձակուրդից առաջ կամ հետո:
- Անընդմեջ աշխատանքի վեց ամիսը լրանալուց հետո ամենամյա արձակուրդի ժամանակի ընտրության իրավունք ունեն հղի կանայք և մինչև 14 տարեկան երեխա խնամող աշխատողը:
- Հղի կանայք և մինչև մեկ տարեկան երեխա խնամող աշխատողը կարող են գործուղման ուղարկվել միայն իրենց համաձայնությամբ:
- Արգելվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ծանր, վնասակար, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանքներում հղի կամ մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց ներգրավելը:
- Գործատուն պարտավոր է որոշել հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց անվտանգության և առողջության վրա ազդող վտանգավոր գործոնների ազդեցության տևողությունը և բնույթը: Հնարավոր ազդեցության առկայությունը որոշելուց հետո գործատուն պարտավոր է վտանգավոր գործոնների ազդեցության ռիսկի վերացման նպատակով ձեռնարկել ժամանակավոր միջոցներ(աշխատանքային պայմանների փոփոխություն/ այլ աշխատանքի փոխադրում նույն կազմակերպությունում, այսպիսի հնարավորության բացակայության դեպքում վճարովի արձակուրդի տրամադրում՝ մինչև հղիության և ծննդաբերության արձակուրդի հատկացումը):
- Եթե հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կնոջն անհրաժեշտ է աշխատաժամանակի ընթացքում բժշկական հետազոտություն անցնել, ապա

գործատուն պարտավոր է նրան ազատել աշխատանքային պարտականությունների կատարումից՝ պահպանելով միջին աշխատավարձը, որը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով միջին ժամային աշխատավարձի չափը,

- Ոչ լրիվ աշխատանքային օր կամ ոչ լրիվ աշխատանքային շաբաթ կարող է սահմանվել հղի կնոջ և մինչև մեկ տարեկան երեխա խնամող աշխատողի պահանջով,
- Երեխային կրծքով կերակրող կնոջը մինչև երեխայի մեկուկես տարին լրանալը, բացի հանգստի և սնվելու համար տրամադրվող ընդմիջման ժամերից, երեխային կերակրելու համար յուրաքանչյուր երեք ժամը մեկ տրամադրվում է լրացուցիչ ընդմիջում՝ կես ժամից ոչ պակաս տևողությամբ: Երեխային կերակրելու համար նախատեսված ընդմիջումների ժամանակահատվածում աշխատողը վարձատրվում է միջին ժամային աշխատավարձի չափով
- Աշխատող կանանց տրամադրվում է հղիության և ծննդաբերության արձակուրդ:

26. Արդյո՞ք գործատուն իրավունք ունի լուծել աշխատանքային պայմանագիրը կնոջ հղիության ընթացքում

Աշխատանքային պայմանագրի լուծումը գործատուի նախաձեռնությամբ արգելվում է հղի կանանց հետ՝ հղիության մասին գործատուին տեղեկանք ներկայացնելու օրվանից մինչև հղիության և ծննդաբերության արձակուրդի ավարտման օրվանից հետո մեկ ամիսը լրանալը:

27. Քա՞նի օր է կազմում աշխատող կնոջը տրամադրվող հղիության և ծննդաբերության արձակուրդը

Աշխատող կանանց տրամադրվում է հղիության և ծննդաբերության արձակուրդ՝

1) 140 օր (70 օր՝ հղիության, 70 օր՝ ծննդաբերության).

2) 155 օր (70 օր՝ հղիության, 85 օր՝ ծննդաբերության)՝ բարդ ծննդաբերության դեպքում.

3) 180 օր (70 օր՝ հղիության, 110 օր՝ ծննդաբերության)՝ միաժամանակ մեկից ավելի երեխաներ ունենալու դեպքում:

Ուղեցույցը մշակվել է ԱՄՆ դեսպանատան ֆինանսավորմամբ Իրավունքների պաշտպանության նախաձեռնություն հիմնադրամի կողմից իրականացվող «Արդյունավետ ինստիտուցիոնալ իրավական աջակցության տրամադրում խոցելի խմբերին Հայաստանում» ծրագրի շրջանակներում: